

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՍՈՒՄԵՆԱԹԵՐԹ

ԽԹ. ՏԱՐԻ - 1935

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի ՄԵՒԻԹԱՐԻՍԵՆ ՄԻՆԵՐՆՈՒԹԵՆԸ ԿՈՂՄԵՆԷ Ի ՎԻԵՆԱՆ Աշխատակցութեամբ ազգային եւ օտար Քանաւէրներու:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Քաճակորդագինն է առեւ նրկրի համար՝ 1 ֆրանկ ստերլինգ, կամ յիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA," VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կիրառայ Կիրառական Առեւտրական Տոհմը՝ միջնորդութեամբ Յարութիւն Կիրառականի, հաճեցաւ առատաձեռնօրէն նուիրել խմբագրութեանս հայատառ գրամատենայ մը, որուն համար հրատարակու մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Խմբագրութեանս տղայրուած):

- Աղաքօն Ե. Գ., Գաղափարի նշխարներ: Մարտէլ 1934: 8°, էջ 304. ձրի: Աշխատանքի կազմակերպումը անանապահական Փէրմաներում: Երեւան 1934: 8°, էջ 24: Բարաեան Պ., Դպրոցական Երգեր (խաղաղութեամբ): Երեւան 1934: 4°, էջ 20: Գիւնն՝ 1 ո.: Գեղարքունի Գ., Փողոցը (արձակ քերթում): Սոֆիա 1935: 12°, էջ 64: Գիւնն՝ 5 Քր.: Դատական-դատախօզական աշխատողների առաջին համամիութենական խորհրդակցութեան քանաձեւերը: Երեւան 1934: 12°, էջ 66:

- Դիտողութիւններ պոլիտեխնիկ եւ աշխարհագրութեան ծրագրերի մասին: Երեւան 1935: 8°, էջ 54: Գիւնն՝ 60 կ.: Եաղուբեան Լ., Հայկական տառերի բարեփոխութիւնը: Երեւան 1934: 4°, էջ 8: Եարուպակի Ե., Համ Կ (բ) Կ պատմութիւն: Մաս Ա.: Երեւան 1935: 8°, էջ 472: Գիւնն՝ 3.20 ո.: Թաթուկեց Վ., Յովնաթան՝ որդի Երեմիայի: Երեւան 1934: 12°, էջ 128: Իլիմսկի Մ., Տարրական դպրոցում քարտէզով ինչպէս պէտք է աշխատել: Երեւան 1934: 8°, էջ 48: Գիւնն՝ 75 կ.: Լուրֆի Միլաս, Գարուն: Պոստըն 1935: 8°, էջ 20:



"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLIX. JAHRGANG - 1935

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՍՈՒՄԵՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1, 2

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ

ԽԹ. ՏԱՐԻ 1935

ՓԻՐԳՈՒՍԻ ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՆՆԵՐԻ

Ներածութիւն:

Ա. Ֆիրդուսի եւ իր գրական գործը: Բ. Դրուագներ հայ-իրանական անցեալից եւ նորեւնացու Պատմութեան 10-րդ դարի վերջերս: Գ. Հայ-իրանական վիպական գրքերը եւ նորեւնացու Պատմութեան եւ Ֆիրդուսու Շահնամի մէջ: Դ. Երեւանի «Ֆիրդուսի» ժողովածուն: Յ աւելում: Ֆիրդուսիական Յուլյանի գրքերը Պարսում:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ֆիրդուսու ծննդեան 1000ամեակի առթիւ Մ. Խ. Հայաստանի Հանրապետութեան «Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտը» հրատարակել է մի բովանդակալից ժողովածու, որի նպատակն է ձգտումը բացատրուած են Առաջարանի հետեւեալ սողերում.

«...Ֆիրդուսին պատկանում է նաեւ մեզ, հայերին: Ինքը՝ հանձարեղ բանաստեղծը, նրա «Շահնամէն» ու «Երգիծանքը», նրա կերտած հերոսներն ու տիպերը հանրածանօթ են հայ ընթերցողին, սիրուած են եւ հարգատեցած հայ աշխատաւոր զիւղացու միջավայրում: Շահնամէի առասպելական-վիպական մոտիվները Ֆիրդուսուց շատ առաջ եւ յետոյ

* Այս աշխատութեան մէջ օգտուած են զլիտւորաբար Jules Mohlի հրատարակութիւնից: Գաղղիացի իրանագէտի այս նշանաւոր երկասիրութիւնը բաղկացած է 7 մեծածաւալ հատորից (in folio), Շահնամէի պարսկերէն ընդգրով եւ նրա դիմացը դաղղիերէն արձակ թարգմանութեամբ, Livre des Rois վերնագրով: Ամէն մի հատոր ունի իր հմտալից ներածութիւնը: Ա. հատորը հրատարակուած է Պարսում 1836ին, իսկ վերջինը՝ Ե. Բ. միայն 1878ին, երբ հեղինակն արդէն վախճանել էր եւ կիսատ մնացած մասն աւարտել է C. Barbier de Meynard: Ի նկատի եմ առած նաեւ Ֆիրդուսու 1000ամեակի առթիւ Պարսում եւ Բրիտանիայում երեւցած նորագոյն իրանագիտական աշխատութիւնները:

բանաւոր տարածուած են եղել Հայաստանում եւ արձանագրուել են հայ մատենագիրների կողմից»:

Առաջարանը վերջանում է հետեւեալ ցանկութեամբ, որին ամէն մի զիտակից հայ անչուշտ պատրաստ է ստորագրելու. — «Թող այս ժողովածուն լինի պարսիկ եւ հայ ժողովուրդների անցեալի եւ ներկայի բարեկամական յարաբերութիւնները, կուլտուրական կապն եւ մերձեցումն ամբողջօր օղակներից մէկը. թող նա լինի մի համեատ պսակ այն հազարաւոր պսակների մէջ, որոնք դրուելու են իր «ժամանակի շնչով» սպրոզ, իր «զարը» դեղարուեստօրէն երգող, պարսիկ ժողովուրդի եւ համայն մարդկութեան մեծագոյն զաւակներից մէկի, հանձարեղ բանաստեղծ Ֆիրդուսու հոյակերտ արձանի վրայ»:

Այս է եղած նաեւ իմ այս համեատ աշխատութեան նպատակն ու ձգտումը:

ՍԱՐՈՒԽԱՆ

Յունուար, 1935:

Ա.

Դիւցագներգութիւնը՝ իրական լինի թէ աւանդական, մի ժողովրդի պատմութիւնն է՝ այն ձեւի մէջ, ինչպէս որ ժողովուրդն ինքն է հիւսել բանաւոր աւանդութեամբ: Ամէն ժողովուրդ ունի իր սեպհական դիւցագներգութիւնը. ամէն ազգի ծագման եւ կազմակերպման մէջ առասպելն եւ գրոյցը մեծ բաժին ունին: Պարսկական կամ աւելի ճիշդը՝ իրանական դիւցագներգութիւնն ոչ միայն պակաս չէ քան միւս ժողովուրդներինը, այլ աւելի ճոխ եւ աւելի բաղմակողմանի: Եւ այս ժողովուրդական հիւսուածքը բնականաբար հետզհետէ աւելի բովանդակութիւն ստացել եւ աւելի զարգացել է դարերի ընթացքում, նայելով պարագաներին եւ գրուցարանների կամ գրաւոր յիշատակարանների հեղինակ-



527-66

ների ընդունակութեանը: Իրանում՝ գրաւոր յիշատակարանները վերաբերում էին գլխաւորաբար Սասանեան հարստութեան հիմնաւորման եւ Զրադաշտի օրէնքի ծաւալման: Անհամեմատ աւելի շատ էին բանաւոր աւանդութիւններն եւ հին գրոյցները:

Առաջին անգամ Խոսրով Ա. Նուշիրուան արքան Զ. դարում, պատուիրել է բոլոր այս ազգային դրաւոր եւ բանաւոր գրոյցներն ամփոփել մի ժողովածուի մէջ: Նրանից յետոյ Սասանեան վերջին արքան, Յազկերտ¹ է. դարում, յանձնում է Դանիշվէր անունով մի դէկլանի (գլեղապետ), որ անշուշտ սրա համար հարկ եղած կրթական պատրաստութիւնն ունէր, որպէս զի այս ժողովածուն կարգի բերէ եւ ինչ որ այնտեղ պահասում է, աւելացնէ եւ լրացնէ: Դանիշվէր կատարում է այս յանձնարարութիւնը, ըստ երեւոյթին մեծ յաջողութեամբ, որովհետեւ նրա շնորհիւ այս կերպով յօրինում է Պարսկաստանի Պատմութիւնը առասպելական կամ ճշգրտոյնը գրուցախառն շրջանից սկսած մինչեւ քրիստոնէական Զ. դարի վերջը կամ է. ի սկիզբը, այն է մինչեւ Խոսրով Բ. Փարվիզ: Ժողովածուն կոչւում էր «Խվադայ-նամակ» պահաւերէն, կամ Խոդայ-նամէ, նոր պարսկերէն, այսինքն «Քագաւո-լագ գիրք», որ յետոյ՝ նաեւ Ֆիրդուսիի գրչի տակ, նոյն անունը պիտի կրէր — Շահնամէ կոչմամբ: Խոդայնամէն գրուած էր պահաւերէն, որ Իրանի պետական լեզուն էր: Բոլոր կրօնական գրքերն էլ այդ լեզուով էին յօրինուած: Պարսկերէն ժողովրդական լեզուն զոյութիւն ունէր, խօսուում էր, գլխաւորաբար Իրանի արեւելեան բաժնում:

Արաբական տիրապետութիւնից յետոյ երբ Պարսկաստանի ինքնավարութիւնը վերականգնուեց, Թ. դարում Դանիշվէրի այդ ժողովածուն պահաւերէնից վերածուեց պարսկերէն ժողովրդական բարբառի: Իսկ երբ Իրանական ազգային ոգին նորից գարթնեց եւ հին գիւցազներգութիւններն իրենց վաղեմի յարգն ստացան, Թ. դարում, պարսիկ բանաստեղծ Դաքքին սկսեց Խոդայնամէն ոտանաւորի վերածել, աւելի եւս բանաստեղծական գոյն տալով նրան: Բայց նա հազիւ 1000 տողի չափ գրել էր, երբ սպանուեց իր ծա-

¹ Այս բարձր հին ժամանակ հնչում էր ոչ թէ Հազկերտ, ինչպէս այժմ, այլ Շազկերտ, ինչպէս էր եւ է պարսկերէնում Շազք(է)կերտ = شاذك: Ուրեմն լատի սկզբունքն էլ այնպէս ինչպէս բառի մէջը, այն, նոյն եւ այժմ եւ ոչ թէ է:

ռայի ձեռքով եւ նրա ձեռնարկութիւնը մնաց կիսատ:

Պարսկաստան՝ այդ ժամանակ, այն է Թ. դարում, թրքական ցեղից սուլթան Մահմուդ Ղազնէվիի գերիշխանութեան տակ էր, որի աթոռատեղին Հէրաթ էր: Այս սուլթանը Ղազնէվիների զարմի երկրորդ արքան էր, ոչ միայն քաջ պատկերազմող, այլ եւ ուսուցիչ-սէր: Նա ժողովել էր իր շուրջը իր ժամանակի գիտնական եւ բանաստեղծ անձերին: Սա ծանօթանալով Խոդայնամէի բովանդակութեան, հրապուրւում է նրա գիւցազներգութեամբն եւ որոշում է շարունակել տալ Դաքքիի ձեռնարկած մեծ աշխատութիւնը: Որոնում է յարմար անձ, եւ ահա յարմարագոյնը՝ բերում են Աբուլ Կասրմ Մանսուր անունով մի երիտասարդ բանաստեղծ, որ հմուտ էր թէ Խոդայնամէին եւ թէ Դաքքիի ձեռնարկութեան եւ նպատակ էր դրել շարունակել այս վերջինը: Սուլթան Մահմուդ նախ ուզում է փորձել Աբուլ Կասրմի կարողութիւնն եւ նրան առաջարկում է մի քերթուած յօրինել իր սիրելիներից մէկի վրայ: Բանաստեղծը գրում է եւ ներկայացնում: Քերթուածը նա կարդում է սուլթանի սովորական բաղմամարդ ժողովում եւ այնքան մեծ ընդունելութիւն է գտնում, որ Մահմուդ նրան իսկոյն եւեթ Ֆիրդուսի²՝ այսինքն «Դարխոտայի» կոչումն է տալիս, որովհետեւ, բացատրում է սուլթանը, նա դրանով իր ունկնդիրների հաւաքոյթը դրախտի էր վերածել: Եւ կոչումը այնուհետեւ մնում է Աբուլ Կասրմի վրայ:

Սուլթան Մահմուդ Ղազնէվի (Ղազնէվի) յանձնում է Աբուլ Կասրմին Պարսկաստանի պատմութիւնը գրել ոտանաւոր քերթուածի ձեւով եւ այս կերպով ծնունդ է առնում աշխարհահռչակ Շահնամէն = Թագաւորաց Գիրքը:

Ֆիրդուսիի այս հսկայական գործը Շահնամէ է կոչուել (شاهنامه), որովհետեւ նա ոտանաւորի ձեւով յօրինել է Իրանի վրայ իշխող արքայական տների պատմութիւնն եւ ընդ մէջը 50 թագաւորի կեանքն ու գործերն է երգել: Բայց նրա պատմութիւնը՝ սովորական ձեւ չունի, այսինքն իրար յաջորդող արքայական շրջանների կարգով չէ պատմուած, այլ առանձին գրուագներով (episodes), որոնք միմիանցից անկախ են եւ չափի կամ մե-

² Ֆիրդուսի բառը, որ մեր մէջ սովորական գործածական ձեւն է, հնչում է նաեւ Ֆիրդաուսի եւ նոր պարսկական՝ Ֆերդաւսի կամ Ֆիրդավսի:

ծութեան կողմից էլ միմիանց անհաւասար: Դրուագներն սկսում են ներածութեամբ (زبان) եւ վերջանում են երբեմն այն աղբիւրների յիշատակութեամբ որոնցից Ֆիրդուսին օգտուել է, երբեմն էլ այս կամ այն արքայի գովասանքով եւ յաճախ բարոյական ու փիլիսոփայական խորհրդածութիւններով, որոնք եւս աւելի բարձրացնում են նրա արժէքը:

Ֆիրդուսին սկսում է իր գիրքը՝ աշխարհի ստեղծումից: Նա նկարագրում է նախ չորս տարրերը, հուր, ջուր, օդ եւ հող: «Յետոյ երեւան եկաւ, ասում է նա, մարդն, որ այս՝ միմիանց կցուած իրերի բանալին է»: Եւ ապա ստեղծուել են արեգակն ու լուսինը:

Շահնամէն Իրանի 4 արքայական հարստութիւնների պատմութիւնն է որոնք են՝ Ա. Փիշդադան (Օրէնսդիրներ), նախապատմական, զուտ առասպելական շրջանն, որ սկսուել է Դաեօմարթով: Այս նախահայրը Աւեստական գրուածքներում յիշուած է իբրեւ մարդկութեան դադափարական նախատիպը: Ֆիրդուսին՝ Փիշդադանի շրջանի առասպելական էակներին իբրեւ կենդանի թագաւորներ է պատկերացնում, որոնց իշխանութեան ժամանակ մարդկութիւնը գիմում է աստիճանաբար դէպի քաղաքակրթութիւն: Շահնամէի մէջ Փիշդադանների շրջանը հազար տարի է տեսում:

Բ. Քէյ կամ Կայի սերունդը, Կայեանի հարստութիւնը, որ Յունական պատմութիւնից յայտնի Ափսևնեան արքայական զարմն է:

Գ. Արշակունիների պարթեւական հարստութիւնն, որ Աղեքսանդր Մակեդոնացու կայսրութեան անկումից յետոյ է իշխել եւ վերջապէս՝

Դ. Սաաանեաններն, Իրանի, հետեւաբար եւ Ֆիրդուսիի սրտին ամէնից մօտ հարստութիւնն, որ հիմնուել էր 220ին եւ վերջացաւ 651ին, Յազկերտ Բ. թագաւորութեամբ, արարների արշաւանքի հետեւանքով:

Շահնամէի մէջ Ֆիրդուսին ոչ մի տարբերութիւն չի գտնում նախապատմական առասպելական շրջանի եւ Սասանեան շրջանի պատմական դէպքերի մէջ: Նրա համար Արտաշիր, Սասանեան հարստութեան հիմնադիրն եւ իր զարմը, Իրանի առաջին երեւակայական թագաւոր, Գաեօմարթի օրինաւոր յաջորդներն են: Շահնամէի հետաքրքրական կողմերից մէկն է այս պարագան: Այս է ի մէջ այլոց, Շահնամէի գտած մեծ յաջողութեան գաղտնիքը: Ֆիրդուսին Իրանական օրինաւոր իշ-

խանութեան ջերմ պաշտպանն է (legitimiste): Նրա այս հաւատարմութեան դրածմունքը դէպի Պարսկաստանի օրինական գահակալները գլխաւոր ազգակն են եղած բանաստեղծի հոչակի տարածման:

Ինչպէս վերեւ տեսանք, Շահնամէի գլխաւոր աղբիւրն է եղած պահաւերական Խոդայնամէն «Մի գիրք, շատ հին ժամանակ գրուած, որի մէջ շատ պատմութիւններ կային» ասում է ինքը, բանաստեղծը, որ ի հարկէ չէ բաւականացել դրանով եւ ամէն կողմից քաղել է ուրիշ գրաւոր, նոյնպէս եւ բերանացի աւանդական գրոյցներ: Այս բոլորն ինչպէս իր ճաշակն ու հայրենասիրական դրածմունքը թելադրել են, նա ձեւաւորել, ծաղկեցրել ու ընդարձակել է: Անկասկած է, որ Զէնդ-Աւեստան եւ առ հասարակ դրադաշտական օրէնքները մեծ ազդեցութիւն են արել նրա քերթուածի ուղղութեան վրայ: Անտարակոյս է նոյնպէս, որ նա գործածել է յունական աղբիւր, դէթ Աղեքսանդր Մակեդոնացու գործերի նկարագրութեան մէջ: Յայտնի է, որ Մակեդոնացի աշխարհակալի պատմութիւնը յունարէնից թարգմանուած էր արարերէնի եւ կարդացուած էր Ֆիրդուսիի ժամանակ: Ֆիրդուսիի համաձայն Աղ. Մակեդոնացին օտար չէր, այլ նոյնպէս պարսկական արիւն էր կրում: Իրանական աւանդութիւնը չէ հանդուրժել, որ այդպիսի հզօր աշխարհակալն եւ Պարսկաստանին տիրողն օտար ցեղից լինի: Շահնամէի մէջ պատմուած է թէ Դիւրար պարսիկ թագաւորը պատերազմ է մղել Փիլիպպոսի դէմ, որ «Յոյների, Ռուսների եւ Պոնտիկների» թագաւորն է եղել եւ չէ դադարել կռուելուց մինչեւ որ Փիլիպպոս իր աղջիկը կնութեան է տուել Դիւրարին: Ահա այս ամուսնութիւնից ծնել է Աղեքսանդր Մակեդոնացին: Բայց սրա ծնուելուց յառաջ Դիւրար իր այդ յոյն կնոջը արձակել է, սա էլ գնացել է հօրը տունը: Փիլիպպոս Մակեդոնացին որդեգրել է իր պարսկազարմ թոռն եւ նրան գահաժառանգ նշանակել: Երբ Աղեքսանդր մեծացել է եւ տեղեկացել թէ ինքը պարսիկ արքայի որդին է, պահանջել է Դարեհից, որ զիջէ նրան Պարսկաստանի գահն իբրեւ անդրանիկ ժառանգին: Երբ Դարեհ չէ ընդունել այս պահանջը, Աղեքսանդր գէնքի է դիմել եւ իր բանակով եկել, գրաւել է Իրանը:

Այսպիսի սիրազորութիւններ, կամ հերոսական, հետաքրքրական դէպքեր, ինչպէս նաեւ սիրահարական նկարագրութիւններ,

դերազանցօրէն ծաղկեցրած եւ գեղեցիկ յանգաւոր ոտանաւորներով դարդարուած մեծ հաճոյքով են կարդացում ժողովրդական շրջաններում: Բայց Շահնամէի կարեւագոյն կողմն է իսկապէս, ոչ միայն քերթուածի ձևը, այլ նաեւ Ֆիրդուսի այնտեղ յայտնած խորիմաստ դատողութիւններն եւ քննադատական հայեացքը:

Քիչ չեն այնտեղ այնպիսի աստուածարանական եւ փրիխոսիայական հայեացքներ էլ, որոնք հիացում են պատճառել ընթերցողներին: Բանականութեան մասին խօսելով, Ֆիրդուսին գրում է. «Բանականութիւնը (la raison) հոգու աչքն է. իսկ առանց այս աչքի մարդը չի կարող աշխարհ կառավարել: Դու միշտ բանականութիւնը քեզ համար ուղեցոյց ընդունիր. նա է, որ քեզ հեռու կը տանի եւ առանց սայթաքելու»: Հետաքրքրական է նրա հայեացքը Քրիստոսի վարդապետութեան մասին, որը նա այսպէս է պատկերացնում. «Եթէ մէկը քո վերաբերուն խլէ, մի բարկանար: Եթէ մէկը քեզ այնպէս ապտակէ, որ աչքերդ խաւարին, մի դայրանար եւ մի թալիանար, այլ աչքերդ փակիր եւ ոչ մի դառն խօսք մի արտասանիր: Եթէ բաւականաչափ ուտելիք չունիս, մի գանդատիր, այլ ունեցածովդ գոհացիր: Եթէ գորգ չունիս վրան նստելու, մի՛ հոգ անիր: Այս կերպով չքաւորութիւն եւ դժբախտութիւն պիտի չղգաս եւ հանդիստ պիտի լինիս»:

Շահնամէն վիթխարի գործ է, հսկայական չափերով: Ֆիրդուսին գրել է 55·000 տուն (بيت, distique). ամէն մի տուն երկու հաւասարաչափ եւ յանգաւոր սող ունի, ընդ ամէնը 110·000 սող, որի մէջ մտնում են Դաքքի սկզբնական 1000 սողերը: Եւ այս ընդարձակ աշխատութեան ամէն մի սողում արտացոլում են Ֆիրդուսի քերթողական հանձարն եւ անդուգական ճարտասանութիւնը:

Ֆիրդուսի առաւելութիւնն եւ փառքն է միանգամայն, որ իր այս սքանչելի գործովը նա պարսկերէն լեզուն կերտել, դարգացրել է: Նրա ոճն ու ասացուածները ընդհանուրի սեպհականութիւն են դարձել, այնուհետեւ եւ մինչեւ հիմայ:

Իրաւունք ունէր Ֆիրդուսին իր աշխատութեան վերջում գրելու՝ «Ահա աւարտեցաւ այս մեծ գործս որի չնորհիւ իմ համբաւս պիտի տարածուի ամբողջ աշխարհում: Իմ անունս պիտի անմահանայ, որովհետեւ ես ցանկեղ ընտիր խօսքի սերմեր: Ամէն ինչացի

եւ բարեպաշտ մարդ իմ յիշատակս պիտի օրհնէ...»:

Մեծ բանաստեղծի վախճանը շատ տխուր է եղած: Նա չէ վայելել իր աննման աշխատութեան արդիւնքը: Նա ունէր նախանձորդներ, չարամիտ հակառակորդներ, որոնք ստորնացրել են նրա արժանիքը սուլթանի աչքում, դիւստորարար այն հիման վրայ թէ Ֆիրդուսի հարազատ մահմետական չէ, այլ հերձուածող եւ թէ իր բանաստեղծութեան մէջ զովարանում է հին, կռապաշտական կրօնին դրադաշտութեան յարողներին: Այս պարագան աղղել է, եւ Մահմուդ, որ մոլեռանդ սիւննիթներ էր, փոխանակ իր խոստացած վարձատրութիւնը լիովին վճարելու, ոսկի դրամով (դինար), ինչպէս որոշուած է եղել, ընդհակառակը չնչին մի դրամար է ուղարկել նրան այն էլ արձաթ դրամ (դիրհամ): Ֆիրդուսի՝ սաստիկ վրդովուել է այս անարդական վերաբերմունքից եւ մի դառն ծաղրական քերթուած է յօրինել Մահմուդի հասցէին եւ հասցրել նրա ձեռքը: Մահմուդ՝ դայրացած, մահուան վճիռ է կարդացել նրա դիւին, բայց բանաստեղծը յաջողել է փախուստ տալ եւ մի առ ժամանակ Պարսկաստանում իր յարգողների մօտ թաղանուկուց յետոյ ապաստան է գտել Բաղդադում: Շատ ժամանակ վերջը Ֆիրդուսի տաղանդը գնահատողները սուլթանից ներում են ստացել, որով բանաստեղծը կարողացել է վերադառնալ իր ծննդավայրն եւ այնտեղ վախճանիլ: Սուլթանը զգալով իր անարդար վարմունքը, նոյն իսկ ուղարկել է նրան իր խոստացած վարձատրութիւնը լիովին: Աւանդութիւնն ասում է, որ երբ այս ոսկեդրամ գումարը փղի կամ ուղտի վրայ բարձուած մտնում էր քաղաքի մի գոնից ներս, միւս գոնից դուրս էին տանում Ֆիրդուսի դիակը: Նոյն իսկ այս վերջին պարագայում էլ նրա մոլեռանդ հակառակորդները հանդիստ չեն թողել նրան, եւ չեն թողարկել որ նրա մարմինը թաղեն մահմետականաց յատուկ գերեզմանոցում, ուստի թաղել են նրա սեփական կալուածքի մի անկիւնում:

Իրանի մեծագոյն բանաստեղծին հասցրած այս անիրաւութիւնն այժմ բարձուած է: Այժմեան լուսամիտ վեհապետը՝ Բըզա շահ Փէլէվին՝ Ֆիրդուսի անունն եւ գործին արժանի մի փառաւոր յուշարձան-գամբարան է կառուցել նրա ծննդավայրում: Իրա կարգադրութեամբ է, որ եզակի հանդիսաւորութեամբ տօնուէլ է մեծ բանաստեղծի ծննդ-

դեան հազարամեակը, որին Ֆիրդուսին կատարելապէս արժանի էր, իր Շահնամէովն, որ Իրանի ազգային ոգու կոթողն է:

Բ.

Հայ ժողովուրդը նախապատմական ժամանակներից ի վեր անմիջական եւ անընդհատ յարաբերութիւններ է ունեցած իր դրացի մեծ երկրի, Իրանի հետ: Նոյն իսկ Հայի եւ Հայաստանի անունն, առաջին անգամ Պարսկաստանում է արձանագրուած, Արմնի եւ Արմենեա ձևի տակ: Դարեհ Վշտասպեան կամ Գոշտասպ Իրանի մեծ արքան Բէհիստունի (կամ Բիսիտունի) ժայռի վրայ, առաջին անգամ քանդակել է այս կոչումը 521ին Ն. Ք.: Այդ ժամանակ, ինչպէս Հերոդոտոս պատմահայրը վկայում է, «Արմինեան» Դարեհի ընդարձակ պետութեան մի սատրապութիւնն է եղել: Հայաստանի այս կոչումը յայտնի էր Խորենացուն, որ գրում է թէ «գաշխարհս մեր պարսիկք անուանեն Արմնի»:

Դարեհի եւ իր յաջորդների ժամանակ հայերը մասնակցել են բնականաբար պարսկական մեծ արշաւանքներին դէպի Հելլադա:

Դարեհից 10 դար յետոյ եւս Հայաստանին նոյն դիրքն է վիճակուել Պարսկաստանի հանդէպ: Միայն թէ երկու երկիրների մէջ եղած կրօնական տարբերութիւնը՝ լարուած յարաբերութիւններ են ստեղծել նրանց մէջ: Սասանեաններն իրենց նախորդ պարթեւ արքաների ուղղութեանն հակառակ, որոնք շատ հաշտարար էին Հայոց նկատմամբ, բռնութիւններ են գործ դնում, աշխատում են ջնջել նորամուտ քրիստոնէութիւնն իրենց բաժին Հայաստանում եւ այս նպատակով մոգպետ ու մոգեր են ուղարկում, կրակատուններ են կառուցանում եւ զրադաշտական ուսումն են տարածում այնտեղ: Զրադաշտականութիւնը հիմ չէ բռնում այնտեղ, բայց նրա ուսումն ապարդիւն չէ մնացել, որովհետեւ մեր Ն. դարի պատմագիրները շատ լաւ ծանօթ են դրան, այնչափ լաւ, որ եւրոպացի գիտնականներ՝ Զրադաշտի (Zaroustra) օրէնքների մասին ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու համար չեն վարանել դիմել մեր Եգիպտիկն ու Եղիշէին: Պահլաւերէնն, որով գրուած էին այդ օրէնքները, հայ արքունիքի էլ գրութեան գործիքն էր: Խորենացին վկայում է, որ երբ Ն. դարում Մաշթոց-Մեսրոպ, որ արքունի քարտուպար (դպիր) էր, հեռացել է Հայաստանից իր հայ գրի որոնումների համար, Արշակունի հայ

արքան «ոչ զոք գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով»:

Զ. դարում Իրանի վրայ իշխում էր Նուշիրվան (կամ Անուշիրուան) մեծ արքան, որ իր վէպեր Բիզանդիայի հետ ընդհանուր հիացման առարկայ էր: Արեւելքը նրանց հասցէին բազմաթիւ գրոյցներ է հիւսել, որոնց մէջ Նուշիրվան պատկերանում է իբրեւ Արդա-րաւթեան ներկայացուցիչ, իսկ Բիզանդիայի՝ Լուսառուբեան: Սրանց ժամանակ էլ, Հայաստանի մեծագոյն մասը Իրանական գերիշխանութեան տակ էր: Ֆիրդուսին գրում է Շահնամէի մէջ թէ Նուշիրվան իր պետութիւնը չորս մասի էր բաժնել եւ այս մասերից մէկն, յատկապէս երկրորդը՝ «Արմինեան էր մինչեւ Արդեբիլ»:

Ֆիրդուսին Հայն եւ Հայաստանը յիշատակում է այն կոչումներով ինչպէս որ էր նրանից 15 դար յառաջ:

Հայ-Իրանական յարաբերութիւնների տեսակետից մեծապէս շահեկան է Ֆիրդուսի մի դրուագն, որ ես հարկ եմ համարում ընդարձակօրէն յառաջ բերել այստեղ:

Զ. դարի վերջը, Խոսրով Բ. Փարվիզ պիտի յաջորդէր իր հօր, Որմիզդին: Բայց Բահրամ Զուրինէ անուշով պարսիկ իշխանը ապստամբում է Որմիզդի դէմ եւ գէնքի է դիմում նրան տապալելու եւ Պարսկաստանի վրայ թագաւորելու համար: Խոսրով՝ նկատելով, որ անկարող է իրեն հաւատարիմ մնացած պարսկական ոյժերով թշնամին յաղթահարելու, դիմում է թէ՛ Յունաց եւ թէ՛ Հայոց օգնութեան: Նա անձամբ գալիս է Հայաստան եւ այնտեղ հայ նախարարներից մանաւանդ երկուքը Մուշեղ Մամիկոնեան որին Ֆիրդուսի՝ «Մուսէյլի» անունն է տալիս եւ Սմբատ Բագրատունի մեծ օժանդակութիւն են մատուցանում եւ հայկական զորքի գլուխ անցած ճակատ են մղում Բահրամի դէմ: Հայկական զորքը պարսկականից բաժան, Մուշեղի հրամանատարութեան տակ, ամայի մի տեղում բանակ էր դրել, յարմար ժամանակ կռուի մէջ մտնելու համար:

Նրա մօտ ապաստանել էր նաեւ Բէզուլի, Խոսրովի մօրեղբայրը: Խոսրով երբ գալիս է Հայոց բանակն եւ տեսնում է այնտեղ իր մօրեղբորը, հարցնում է սրա որպիսութիւնն եւ երբ լսում է նրա դիւին եկած փորձանքները, շատ ցաւում է եւ լաց լինում: Խոսրով տեսնում է «Մուսէյլին», եւ Բէզուլին հարցնում է թէ ո՞վ է նա: Բէզուլին պատասխանում է.

«Ո՛վ արքայ, արեգակի դէմք, ինչո՞ւ մի քանի շնորհալի խօսք չես ուղղում Մուսէյլին: Այն օրից, որ դու Իրանը թողիր եւ Յունաստան գնացիր, սաամենեւին չէ պառկած մշակուած տեղում: Նրա բնակարանը վրանն է եղած ա- նապատում. նրա պալատը կտաւից ու թաղի- քից էր շինուած»:

«Նա բազմաթիւ զօրք է ժողոված, զինա- ւորուած է մեծ իշխանի նման. ունի նաեւ դրամական գանձ: Մուսէյլ անյողողը կե- ցած է այս ճանապարհի վրայ, սպասելով քո զարձին, որովհետեւ իր մեծ փափազն էր որ քեզ տեսնէ Իրան վերադարձած»:

«Խոսքով, աշխարհի տէրն, ասաց այն ժա- մանակ Մուսէյլին: Ի՞նչպէս կարելի է, որ քու քաչած այսչափ նեղութիւնն անհետեւանք մնայ: Ես պիտի աշխատիմ, որ այսուհետեւ քու օրերը երջանկութեան մէջ անցնին եւ ա- նունդ մեծերի մէջ մեծագոյնը լինի»:

«Մուսէյլ նրան պատասխանեց. Ո՛վ ար- քայ, տուր ինձ դէժ մի անգամ մի բոպէ բախ- տաւորութիւն. թոյլ տուր որ մերձենամ եւ համբուրեմ քու ասպանդակը եւ այս կերպով իմ յարգանքս մատուցանեմ քու մեծութեանն եւ շնորհիդ: Խոսքով պատասխանեց. Գու կրած նեղութիւններդ փոխարէն այսուհետեւ պիտի բազմացնեմ եւ աւելի փայլեցնեմ քու գանձերդ. կը կատարեմ խնդիրքդ. քու ա- նունդ ամենասէպ անուններից գերազանց պիտի դարձնեմ: Այս ասելով նա հանեց մի ոտքն ասպանդակից եւ այս խելացի անձը, Մուսէյլ, անհամբուրութեամբ համբուրեց նրա ոտքն ու ասպանդակը. նա բոլորովին շփո- թուեց Խոսքովի ահից: Թագաւորն երբ նրա այս աստիճան անձնութիւնը տեսաւ, հրա- մայեց, որ վերստին ձի նստի, իսկ ինքը ու- ժեղ կերպով իր երկվարը մղելով դուրս ելաւ այն ամայի վայրից եւ այսպէս վազեց մինչեւ Ազէրբայճանի տաճարը»:

Խոսքով իր բանակը երեք մասի է բաժա- նում. հայկական զօրքը Մուշեղի հրամանա- տարութեան տակ ձախ կողմն է դրուած: Արժէ յառաջ բերել պարսկերէն բնագիրը.

بدست چيش نامدار ارمنى

այսինքն՝ ابا جوش و تبغ ارمنى

«Ձախ թեւի վրայ Հայն էր անուանի Հազած էր զրահ, եւ սուրն Ահրիմանի»:

Ընդհանուր հակառակորդը՝ Բահրամ՝ մեծ ջանքեր է գործ դնում Խոսքովի ոյժը

տկարացնելու. այս նպատակով նա փորձեր է անում Հայոց զօրքն իր կողմը գրաւելու, այլեւայլ խոստովանելով: Բայց հայերը մնում են անդրդուելիօրէն հաւատարիմ պարսիկ օրի- նաւոր արքային: Այն ժամանակ Բահրամ փո- խում է իր տակտիկան (tactique), սկսում է արհամարհանքով վերաբերուել Հայոց եւ ա- սում է իր զօրքին ըստ Ֆիրդուսիի՝ «Ո՛վ կայ ձեր դիմացը. մի կամ երկու երկչոտ հայ գունդ»:

Իսկ Ֆիրդուսին իրբեւ նրա այս անար- գանքին պատասխան՝ դովարանում է, ասե- լով՝

از ارمنيہ نیز چندی سپاه

همی تاخت چون باد با اورا

այսինքն՝

«Հայաստանից եկած մի քանի զօրագունդերը Բոլորն էլ յառաջ դիմեցին հողմի նման ա- րագ»:

Ճակատամարտը վերջանում է Խոսքովի յաղթութեամբ: Մուշեղ անձամբ ջախջախում է Բահրամի զլուխը:

Խոսքով կատարում է իր խոստովան եւ վարձատրում է Մուսէյլին, այսինքն Մուշեղ Մամիկոնեանին:

Այս պատմական դէպքը գրեթէ նոյնու- թեամբ նկարագրուած ենք գտնում հայ պատ- միչները քով: Թուականը 589 է. Վահրամ Նիխորձէս, որ Շահնամէի Բահրամ Զուբինէն է, ասպատակում է Խոսքով Բ. ի հօր, Որմիզըի դէմ: Խոսքով զօրք է հաւաքում Հայաստա- նում.

«Եկեալ Խոսքովու, ատում է Չամչեան, 70.000 զօրօք ի Դուին, գումարեաց եւ յաշ- խարհէ Մեծին Հայոց ի ձեռն Միհրանայ մարզպանի, զոր իբր 30.000 եւ ես զնոսա ի ձեռս Մուշեղայ...»:

«Յերիս բաժանեաց Խոսքով զզօրս իւր. եկաց ինքն ի միջին գնդի եւ ներսէս ընդ նմա զօրօք Յունաց: Յաջ թեւն Մեկոդ եւ Զար- միհր զօրավարք Պարսից, հանդերձ պարսիկ գնդաւ, եւ յաեակ քեւն Մուշեղ ընդ Սմբա- տայ Բագրատունուց, զօրօք Հայոց: Մուշեղ հանդերձ գնդաւն Հայոց բանակեցաւ ի դաշտի, աւուրք միով հեռի ի բանակէն Խոսքովու: Լուեալ Վահրամայ թէ Մուշեղ երեսուն հա- զարաւ բանակեալ է մեկուսի, հեռի ի Խոսքո- վայ, ի դաշտի, եկն ի վերայ նորա յանակնկալ պահու...: Իսկ քաջն Մուշեղ, որ յեցեալ էր ի ձերութիւն, քաջալերեաց զնոսա (զօրքն) եւ

անպա ի մի բերան աղաղակեալ «Ս. Կարապետ հաս մեզ յօգնութիւն», դիմեցին առ հասա- րակ ի վերայ զօրացն Վահրամայ հանդերձ հե- ծելովքն Պարսից եւ հարին զնոսա չարաչար յոյժ...: Իսկ Մուշեղ յոգիս ապաստան՝ զվերջին շունչ զօրութեան իւրոյ ցուցեալ, ձղեաց դմուրճ իւր եւ եհար ուժգնութեամբ զգլուխ Վահրամայ եւ ցրուեալ զուղեղ նորա եւ յերկիր կործանեաց զնա»¹:

Այնուհետեւ Մուշեղ Մամիկոնեան իր ծե- րութեան պատճառով քաշուած է ասպարէզից եւ Սմբատ Բագրատունին է լինում Խոսքովի աջ բազուկը՝ սրամզած բոլոր ճակատամարտ- ներում, մանաւանդ հիւսիսականաց դէմ: Սմբատ ամէն տեղ, պարսկական բանակի զլուխ անցած, որին անշուշտ նա հայ զօրքի մասնակցութիւնն էլ բերում էր, յաղթական է հանդիսանում: Պարսկաստանի սահման- ները այնպէս քաջաբար է պաշտպանում, որ պարսից արքան նրան՝ իրեն հպատակ հիւսի- սային դաւառների վրայ, ինչպէս էր օր. հ. Վրկանը, մարդպան է դնում: Սմբատի հե- ղինակութիւնը մեծ է եղած Հայաստանում եւս: Նրա միջնորդութեամբ, Խոսքով իրա- ւունք է տալիս նոր եկեղեցի կառուցանելու:

Սմբատ Բագրատունի յատուկ Դուին է դալիս եւ դեկավարում է, որ կաթողիկոսա- կան թափուր աթոռի վրայ նոր հայրապետ ընտրուի (607ին) եւ նոյն իսկ միջամտում է Հայոց եւ Վրաց եկեղեցիների մէջ այդ միջո- ցին ծագած կրօնական հարցերին: Խոսքով այնքան դոհ է մնում Սմբատից, որ նրան բո- լորովին տանում է Պարսկաստան եւ իր ար- քունիքում պահում մեծ պատուով:

Խոսքով Բ. Փարվիզին (Ապրուէզ) յաջոր- դում է Յազկերտ Բ., որ իր ուշադրութիւնը նուիրում է Պարսկաստանի մշակոյթին: Նա յանձնում է մի զարգացած հայրենասէր «դիհ- կանի» (գիւղապետ)՝ Դանիշվէրին, որ վերա- կազմէ պահաւակաւ «Ուլատայ-նամակը» (Խո- դայ-նամէ) լրացնելով ինչ որ այնտեղ թերի էր եւ աւելացնելով նոր զրոյցներ եւ աւան- դութիւններ Պարսկաստանի փառաւոր ան- ցեալից, ի հարկէ ծաղկեցնելով բանաստեղ- ծօրէն: Դանիշվէր յաջողութեամբ զլուխ է հանում այս մեծ յանձնարարութիւնը: Նրա գործին հետեւում էին Յազկերտի, եւ առ հա- սարակ պարսիկ արքունիքի մօտ անձնաւորու- թիւններն, որոնց կարգում նաեւ Բագրատու-

¹ Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ., 296—298:

նինքէն, Սմբատի մերձաւոր արեւնակիցները, նոյն իսկ Իրանի բուն սահմաններից դուրս, Հայաստանում եւս:

Ահա այս վերջիններին թուումն է եղած, կարծում եմ, պատանին Սահակ Բագրատու- նին, որ այս կամ այն կերպով, ձեռքի տակ է ունեցած այդ Խոդայ-նամէի մի օրինակը եւ ոգեւորուած ու սքանչացած նրա մէջ պատ- մուած հերոսական սիրազորութիւններով: Սահակ զգացած է թէ իր ազգն էլ անշուշտ ունեցել է յիշատակաց արժանի դէպքեր, ան- ցեալում, որոնք մնացել են ցիր ու ցան եւ շատերին անձանթ: Եւ նա փնտոել է մի հայ Դանիշվէր, որ կատարէ Հայ ժողովրդի հա- մար այն, ինչ որ նախ Նուշիրվանի ժամանակ հաւաքուել է եւ ապա Յազկերտի պատուէրով լրացուել է պարսիկ Դանիշվէրի ձեռքով: Նա գտել է այդպիսին յանձին Մովսէս Խորենա- ցուն եւ պատուելի է նրան յօրինել այդ ժո- ղովածուն յատկապէս Հայոց համար:

Ահա, իմ կարծիքով, ի՞նչ պարագանե- րում է յղացուել Խորենացու Հայոց Պատմու- թիւնը: Դայով նրա թուականին, այդ եղել է ոչ կանուխ Եօթներորդ դարի միջինքն, որով- հետեւ նրան իրբեւ շարժառիթ եւ սկզբնական աղբիւր հանդիսացող պարսկական ժողովա- ծուն կամ համադրութիւնը դոյութիւն է ա- ուել Յազկերտ Բ. ի ժամանակ, որ վախճանել է է. դարի կէսին, ճիշդ 651ին:

Տեսնենք այժմ թէ ինչպէ՞ս է կատարել մեր բազմահմուտ պատմահայրն իրեն տրուած այս պատուէրը:

Գ.

Մ. Խորենացին իր Պատմութիւնն սկսում է Սահակ Բագրատունուն ուղղած մի գեղե- ցիկ եւ պատշաճաւոր «խօսքով», որ տեղ նա գովում է իրեն պատուէր տուողի այս նախա- ձեռնութիւնն, եւ հաստատում է թէ նրանից յառաջ ոչ ոք «հարուստ եւ իշխան» չէ մտա- ծել թէ անհրաժեշտ էր մեր երկրի անցեալի յիշատակները ժողովել եւ գրի առնել: «Որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մեօք եղեն հա- րուստք եւ իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեւք գրելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել գլխատակս բանից, եւ ոչ արտաքուստ ուս- տեք սցսոցիկ ի ներքս ամել խորհեցան օժան- դակութիւնս իմաստից եւ զՔեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք... յաղագս որոյ հեշ-

առարար ընկալելալ զքո խնդիրդ աշխատասիրե-
ցայց ի կատարունմ» (էջ 4) 1:

Այս խօսքերից յետոյ Խորենացին պար-
զում է թէ ի՞նչ ծրագրով եւ ինչ աղբիւրներէ
վրայ հիմնուած, նա պիտի գրէր Հայոց ան-
ցեալի պատմութիւնը: Եւ նա չէ ծածկում
Բագրատունուց թէ ինքն ամենեւին հաւան չէր
այն ոգեւորման, որով նա տողորուել էր իրա-
նական զրոյցներէ ընթերցումի շնորհիւ եւ
այս զրոյցներին տուած մեծ կարեւորու-
թեամբը: «Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ
ընդ մտացդ ծննդականութիւն (ուզում է ասել
յլացում conception), որ յիսկզբանցն մերոց
ազգաց մինչեւ ցայժմուս միայն գտար զայս-
պիսոյ մեծ իրէ բունն հարկանել եւ մեզ խոյզ
խնդրոյս առաջի արկանել՝ երկար եւ շահա-
ւոր գործով զագգիս մերոյ կարգել զպատմու-
թիւնն մշտիւ զթագաւորացն եւ զնախարա-
րական ազգաց եւ տոհմից» (էջ 12):

Խորենացին՝ անկասկած ծանօթ է հոռայ-
նամէից եւ սրան իրրեւ աղբիւր ծառայող իրա-
նական զբաւոր զրոյցներին, որովհետեւ իր
պատմութեան մէջ քանիցս յիշում է այդ մա-
սին, թէ եւ մատենաներէ անունը չէ տալիս,
որոնք գուցէ չունէին էլ: Բերեմ մի քանի
օրինակներ:

«Բազում ազգաց լեալ մատենագիրք, որ-
պէս ամենեցունց է յայտնի, մանաւանդ Պար-
սից եւ քաղզէացոց, յորս առաւել ազգիս մե-
րոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք...»
(էջ 6):

«Քանզի գտանին եւ միջոցք լեալ պատե-
րագմացն, եւ գիր Պարսից եւ Յունաց...,
այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մա-
տեանի» (էջ 12):

«Ապա թէ ասիցես, ուստի՞ մեզ եւ զնախ-
նեացն մերոց բազմաց այսպէս գտանել զա-
նունան եւ զգործս, ասեմ՝ ի հնոցն զիւանաց
քաղզէացոց, ասորեստանեայց եւ Պարսից,
վասն մտելոց անուանց եւ գործոց նոցա ի
քարտէս (քուղթ) արժուի, իբր գործակա-
լաց եւ վերակացուաց աշխարհիս ի նոցանէ
կացելոց եւ մեծաց կուսակալաց» (էջ 98):

Խորենացին «հետաքար» ինչպէս ինքն է
ասում, ընդունում է Սահակի առաջարկու-
թիւնը՝ «զազգիս մերոյ կարգել զպատմու-

1 Օգտուում եմ Խորենացու հետեւեալ հրատարա-
կութիւնից. «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն
Հայոց, հանդերձ զազգ. թարգմանութեամբ. Histoire
de Moïse de Khoréne, trad. française par P. E. Le
Vaillant de Florival. Վենետիկ 1841: Յիշատակու-
թիւններն այստեղից են:

թիւն», բայց գեփամակութիւն է ցոյց տալիս
պատմելու նաեւ Հայոց ժողովրդական առաս-
պելական զիւցազներէ գործերը, այն ձեւով
ինչպէս որ կային պարսից «գրուցաց մա-
տեանքի» մէջ եւ յորդորում է Սահակին կա-
րեւորութիւն չտալ «պաշտակաց առասպել»-
ներուն կամ ինչպէս քիչ յետոյ ասելի եւս շեշ-
տում է՝ «առասպելաց առասպել»ներուն:
Այնու ամենայնիւ, նա լռեցնում է իր այս
չկամութեան զգացմունքն ի սէր Սահակին, ի
նկատի ունենալով որ պատանեկութիւնը եւ
յանձն է առնում այդ եւս գրել. «Տացուք զայ-
ստսիկ մանկականի քոց տիրոց եւ անհասութեան
խակութեանց լեալ տարփանք, վասն որոյ
եղիցի եւ աստանօր ընուլ մեզ զիստիպ կա-
մաց քոց» գրում է նա: Ուշադրութեան ար-
ժանի է, որ հայ վիպասանների երգերը յա-
ռաջ բերած ժամանակ նա հիմնում է պարս-
կական աղբիւրների վրայ եւս, «պարսից մա-
տեանից վկայեմ եւ Հայոց երգն վիպասանաց»
(էջ 262) ասելով:

Եւ այսպէս Խորենացին սկսում է պատմել
իրանական զրոյցներն ակամայ, միմիայն Սա-
հակին գոհացում տալու համար:

Տեսնենք այժմ այն զրոյցներն, որոնք
կան Խորենացու քով եւ ապա ընդարձակօրէն
նկարագրուած են բանաստեղծական բունն
աւելնով Շահնամէի մէջ:

1. Խորենացին իր Պատմութեան մէջ ա-
ռանձին Գլուխ է յատկացրած Բիւրասպ
Աժդահակի առասպելին՝ «Ի Պարսից առաս-
պելաց յաղագս Բիւրասպի Աժդահակայ» վեր-
նագրով, որտեղ գրում է.

«Բայց զի՞նչ արդեւք տարփանք քեզ եւ
Բիւրասպի Աժդահակայ փծուն եւ անճոռնի
առասպելք իցեն, եւ կամ է՞ր սակս զմեզ Պար-
սից անյարմար եւ անոճ բանից մանաւանդ
թէ անբանութեան առնես աշխատ եւ անբարի
առաջնոյ նորա բարերարութեան եւ զիւաց
նմա սպասաւորութեան, եւ ոչ վրիպեցուցա-
նել կարելոյ զվրիպեալն եւ զսուտն եւ ու-
սոցն համբուրումն եւ անդուստ զվիշապացն
ծնունդս եւ յայնմհետէ շարութեան յաճախու-
թիւն, ծախել զմարդիկ ի պէտս որովայնի»:

«Իսկ ապա եւ Հրուդեմայ ումեմն զնա
կապել սարեօք պղնձեօք եւ ի լեռունն տանել,
որ կոչի Դրմբաւրնդ: Այլ եւ ի ճանապարհի
ննջելն Հրուդեմայ եւ Բիւրասպեայ քարչելն ի
բլուրն եւ զարթչելն Հրուդեմայ եւ տանել զնա
յայրս ինչ լեռինն եւ կապել, եւ զինքն անդրի
ընդգէմ նորա հաստատել, յորմէ պակուցեալ

հնազանդեալ կայ շաքայիցն եւ ոչ գօրէ Ելանի
եւ ապականի գերկիրն» (էջ 132):

«Իսկ վիշապացն բուսունն կամ կատա-
րելապէս վիշապանան Բիւրասպեայ, որ ասի,
է այս: Քանզի անբաւ մարդիկ սկսաւ զոհել
զիւաց, մինչ տաղտկանալ ի նմանէ բաղմու-
թեանն եւ միարանեալ ամենեցուն եւ հալա-
ծեւ, եւ փախչել նմա ի նախասացեալ լեռինն
կողմանս եւ ի սաստիկ վարելոյն զնա, թօթա-
փեցաւ ամբօս նորա ի նմանէ: Յայս վստա-
հացեալ վարողացն զնա՝ հանգեան աւուրս
ինչ զտեղեօքն: Իսկ Բիւրասպեայ ժողովեալ
զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ի վերայ,
վնաս սաստիկ առնելով. այլ յազթէ բաղմու-
թիւնն եւ փախտական լինի. եւ հասեալ սպա-
նանն զնա մերձ ի լեռունն եւ ընկնումն ի վիհ
մեծ ծծմբոյ» (էջ 136):

Այս առասպելը՝ Շահնամէի ամենագեղե-
ցիկ զբոլակներից մէկն է, շատ յաճախ կի-
րարկուած: Այստեղ զրոյցը հետեւեալ կեր-
պարանքն ունի: Նախ պարզենք, որ Աժդա-
հակ = Դոհակ = վիշապը՝ Ֆիրդուսի Զո-
հակն է, չար հսկան, որին Խորենացի Բիւ-
րասպ անունն է տալիս, ինչպէս որ ընդու-
նուած էր Հայաստանում: Բիւրասպ նշանա-
կում է տասն հազար ձիու տէր (Բիւր =
10.000, ասպ = ձի, պարսկերէն): Պարսիկ-
ները նրան Մարի եւս են կոչել՝ վիշապ: Ֆիր-
դուսին պատմում է, որ Փիշդադան առաջին
հարստութեան ժամանակ Ալեքսիդ, որ Գաեօ-
մարթի երրորդ յաջորդն էր, այնչափ փառա-
ւոր իշխանութիւն է վարել, որ ինքն իրեն
աստուած է յայտարարել եւ ընդունել տուել:
Բայց արարների թագաւորը Զոհակ նրա զէմ
պատերազմ է վարել եւ նրան գահնկէց անե-
լով ինքը թագաւորել է Պարսկաստանի վրայ:
Զոհակ ամէն մի ուսի վրայ մի մի վիշապ է
ունեցել, որոնք կերակրուել են մարդկային
ուղեղներով: Այսպէս են սնուցել նրանց, որ-
պէս զի Զոհակի կեանքին չվնասեն: Այս ան-
վերջ մարդկային զոհերից զայրացած ժողո-
վուրդն ապստամբել է Կալէ անունով մի հե-
րոս դարբինի առաջնորդութեան ներքեւ: Այդ
ժամանակ է երեւում Ֆիրդուսի զիւցազնն
(Խորենացու Հրիդուներ), որ կուում է Զո-
հակի զէմ, բռնում է նրան, տանում է Դա-
մաւէնդ լեռն, այնտեղ շղթայում եւ վերջա-
պէս մահացնում: Այս կերպով Պարսկաս-
տանն իր գահճի ձեռքից ազատելուց յետոյ
Ֆիրդուսն նստում է գահ:

Բիւրասպ-Զոհակի այս վախճանը Հայոց

«վիպասաններն» ինչպէս կոչում է նրանց Խո-
րենացին, յարմարեցրել են Արտաշէսի նա-
խանճոտ եւ չարամիտ որդի Արտաւազդին, որ
«յԱզատն ի վեր ի Մասիս» որսի զնալիս,
«քաջք» կամ դեւերը բռնել են նրան եւ այն-
տեղ շղթայակապ պահել: Միայն թէ պարս-
կական Դէմաւէնդ լեռն այստեղ, բնականա-
բար հայկական Մասիսով է փոխանակուել:

2. Շահնամէի մէջ շատ ծանօթ եւ մեծ
հաճոյքով կարդացուած զբուռազ է Սիմորդ
հսկայ եւ բարերար թռչունի վէպը: Այս
վիթխարի արծիւն իր բունն ունէր Գովկա-
սեան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթի
Էլբրուսի վրայ (Շահնամէի մէջ Ալբորդ):
Այնտեղից նա նկատում է մի փոքրիկ երե-
խայի, որ իր սեպհական հօր, Սամի ձեռքով
նետուել, թողուել էր լեռան վրայ: Սիմորդ
խղճալով, կտուցներով բռնում, տանում է
նրան իր բունն եւ այնտեղ իր ձագերի հետ
միասին մեծացնում է: Տարիներ անցնելուց
յետոյ, երբ երեխան արդէն մեծացած է լի-
նում, Սամ խղճի խայթից զբողուած բարձրա-
նում է լեռ եւ այնտեղ իր որդուն է վնասում:
Սիմորդ տեսնում է եւ ցոյց է տալիս երե-
խային, որի անունը Զաալ էր, յայտնելով թէ
իր հայրն էր եւ եկել էր նրան տանելու:
Զաալ՝ իր հօր անգութ վարմունքից զայրա-
ցած ի սկզբան չէ ուզում հօրը մօտենալ,
բայց բարի արծիւի յորդորանքով համաձայ-
նում է գնալ եւ հօրն ընկերանալ: Սիմորդ
նրան խոստանում է, որ երբ որ եւ է նեղու-
թեան մէջ ընկնի, ինք, արծիւը, միշտ իսկոյն
նրա օգնութեան կը հասնի եւ կը պաշտպանէ
մինչեւ իր մահը: Զաալ դառնում է քաջ եւ
զեղեցիկ երիտասարդ եւ սիրահարում է Բու-
դարահ անունով աղջկան վրայ: Նրանց այս
սիրոյ դրուագը Ֆիրդուսին սքանչելի կերպով
երգած է Շահնամէի մէջ: Երկու սիրահար-
ներն, ինչպէս բոլոր այսօրինակ զէպքերում,
վերջի վերջոյ «հասնում են իրենց մուրազին»:
Մի օր Զաալ տեսնում է, որ իր կինը անտա-
նելի ցաւերի մէջ տանջուում է. չի իմանում
պատճառն եւ իսկոյն կոչ է անում Սիմորդին:
Բարի Սիմորդ լսում է իր բունից նրա աղա-
ղակն եւ անմիջապէս թռչում է եւ գալիս:
Բուդարահին տեսնելու պէս նա յայտնում է
թէ նրա քաջածր ծննդաբերութեան ցաւն է եւ
մինչեւ իսկ սովորեցնում է թէ ինչպէս պէտք
է նրան օգնել: Բուդարահը շնորհիւ այդ խոր-
հուրդի, ազատուում է եւ աշխարհ է բերում



Պարսկաստանի ամենամեծ գիւցազներն, Ռոստամին:

Խորենացին գիտէ այս հրաշալի թուջունի առասպելն, բայց չէ ուզում երկարատեւ պատմել, որովհետեւ «բաջազանք» է համարում այդ: Միայն թէ իրանական Սիմոնի նման մի բարերար արծիւի գոյութիւնը նա ըսել է Հայաստանում: Այսպիսի մի թուջունի շնորհիւ է պահպանուել Արծրունիների նախահայրն, որ այդ պատճառով էլ կրում է այս անունը: Ահա ինչպէս է նա պատմում այս աւանդութիւնն, որին ինքը չէ հաւատում բնականաբար: «Եւ զԱրծրունիսդ գիտեմ ոչ Արծրունիս այլ արծիւ ունիս, որք արծուիս առաջին նորակրէին: Թողում գառասպելեացն բաջազանս, որ ի Հաղամակերտին պատմին. մանկան նիրհելոյ, անձրեւ եւ արեւ հակառակեալ եւ հովանի թռչնոյ պատանուոյն թալկացելոյ», էջ 154: Այսինքն մանուկը քնի մէջ է եղել անձրեւի եւ արեւի տակ, եւ արծիւը իր թեւերով պաշտպանել է ուժասպառ երեխան:

3. Ծահնամէի Ռոստամ գիւցազներ ոչ միայն Հայոց այլ Կովկասի միւս ժողովուրդների էլ ամէնից սիրած վէպն է: Ռոստամի սիրագործութիւնները մեծ եռանդով երգուել են գանազան փոփոխութիւններով հայ ժողովրդի մէջ, բայց Ծահնամէի երեւումից յետոյ: Այս իրանական զրոյցները Հայաստանում մուտ են գործել նախ նախարարական կամ առանձնաշնորհեալ դասակարգերն եւ ապա տարածուել ժողովրդական խաւերում, կերպարանափոխութիւնով տեղական պայմանների համաձայն:

Ծահնամէի համաձայն Ռոստամ անուկի Փրիլիքական ոյժի տէր է եղել: Դեռ երեխայ հասակում, նա արդէն փրկ է սպանում: Հայրենիքի թշնամիներին սարսափ է ազդում: Մի անգամ նա ազ ծախող վաճառականի նման ծպտուած, մտնում է մինակ թշնամու բերդն եւ բոլոր բերդապահներին սպանում: Պարսկաստանի վրայ արշաւող Թուրանի դէմ անընդհատ կռիւներ մղելով երկիրը մաքրում է այդ ասպատակողներից: Ամէն անգամ, որ հայրենիքը վտանգի մէջ է, Ռոստամն է փրկողը: Ուստի արքան՝ Քէյ- (կամ Կայ) Կորագ, նրան իրանի Պաշտպան տիտղոսն է յատկացնում: Այս վէպի ամէնից սրտաշարժ գրուազն, որ շատ յայտնի է եւ նոյն իսկ Եւրոպայում, Միջին Դարում, վիպասանութիւնների նիւթ է դարձած, հետեւեալն է:

Ոչ մի առթիւ ոչ մէկը չէ համարձակուում

Ռոստամի հետ մենամարտի: Մէկը միայն, դեռ պատանի, Սոհրաբ (կամ Ջոհրաբ) անունով յանդգնում է այդ քայլն անել եւ այնչափ ճարպիկ ու կտրիճ է լինում որ առաջին անգամին՝ յաղթում եւ տապալում է Ռոստամին. կարող էր մինչեւ անգամ սրա կեանքին վերջ տալ, բայց Ռոստամ յիշեցնում է նրան իրանի մենամարտական օրէնքներն եւ Սոհրաբ վեհանձնօրէն բաշխում է նրան կեանքը: Նրանք շարունակում են կռիւը եւ երրորդ մենամարտութեան ժամանակ Ռոստամ մահացու վէրք է հասցնում իր անձանթ երկուստարդ հակառակորդին: Միայն սրա մահից քիչ յառաջ դադարիքը բացուում է Սոհրաբ՝ հերոս երկուստարդը՝ Ռոստամի հարգատ որդին է: Այնքան խոր վիշտ է զգում հայրն այս անակնկալ յայտնութիւնից, որ ուզում է անձնասպան լինել, բայց չեն թողնում: Վերջիվերջոյ իրանի թշնամիներից մէկը, Կարուլի թագաւորը, թակարդ է սարքում Ռոստամի դէմ եւ նրան սպանում:

Որքան քիչ բան գիտէ Խորենացին այս մասին, կամ աւելի հաւանականօրէն, որքան դուռնուորած, ծաղկեցրած եւ ընդարձակած է Ֆիրդուսին այս պահլաւական հին զրոյցը, Ծահնամէի մէջ...:

Խորենացին երկու խօսք է ասում միայն նրա մասին եւ շատ աւելի երկար խօսում է նրա իբր թէ հաւատար հայկական Տորք Անդեղեայ վրայ: Այսպէս նա գրում է.

«Իսկ զայր խոթոռագեղ եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնահայեաց, ի գաւակէ Պասքամայ, ի Հայկակաթոնէ, Տորք անուն կոչեցեալ, որ վասն առուել ժահադիմութեանն ձայնէին անգեղեայ, վիթխարի հասակաւ եւ ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից. եւ յերեսացն անպիտանութեմէ կոչէ դանուն ազգին Անգեղ Տուն: Բայց եթէ կամիս, ստեմ եւ ես յազագս նորա անյագ եւ փցուն, որպէս պարսիկ վասն Ռոստամայ Սագնիկի հարիւր եւ քսան փոց ոյժ ասելոյ»:

4. Այս միեւնոյն Ռոստամի որդի Սոհրաբի մասին մի հին իրանական երգ կայ թէ նա ինչպէս իր հաւանած աղջկան մէջը պարանով փաթաթելով բերել է իր մօտ: Այս երգն է, որ հայ ժողովրդի մէջ տարածուելով վերածուել է հայկականի եւ Խորենացու գրչով՝ Արտաշէսի եւ Սաթենիկի ծանօթ գեղեցիկ քերթուածն է հասցրել մեզ.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեանն

գեղեցիկ եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն, ընկէց ի մէջը օրիորդին Արանաց եւ շատ ցաւեցոյց զմէջը վախով օրիորդին արադ հասուցանելով ի բանակն իւր»:

Իսկ Ֆիրդուսին այսպէս է երգում Ծահնամէի մէջ, Սոհրաբի այս քաջագործութիւնը.

«Ասաց եւ շուտ թամբից հանեց
նա դաւարած մի պարան,
Գրեց, ընկաւ փոկը մէջքին
եւ նա բռնեց աղջկան,
Երբ աղջկը պարանի մէջ
տեսաւ իրեն պարսիկած,
Որքան արեց մէջից դուրս գալ,
նա աղատուել չկարաց:
Իմ ձեռնից չես ազատուել
ասաց Սոհրաբն իր գերուն,
Ինչո՞ւ համար դու լոյս աղջիկ
քեզ կռիւ ես որոնում» եւ այլն²:

5. Խորենացին իբր թէ «պախլաւկաց առասպելներից» զգուշանալով, մի քրիստոնէական պարսիկի գրուածքին է դիմում, որպէս աւելի վստահելի, մի ինչ որ Խորենացու Ռաստոսունի, որի գոյութիւնը դեռեւս անծանօթ է մնացած: Ահա նրա խօսքերը.

«Այս Խորենացու դպիր եղեալ Ծապհոյ թագաւորին պարսից... եւ մերոյ հաւատոյս դաւանեալ, անուանեցաւ Եղիազար, եւ յոյն լեզու ուսեալ պատմագրեաց զգործս Ծապհոյ եւ Յուլիանու: Ընդ նմին թարգմանեաց եւ զառաջնոցն պատմութիւնս մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստոսուն կոչեն, յորմէ մեր ուսեալ, երկրորդեմ այժմ ի դիրս յայս, թողով զառասպելաց նոցա բարբաձմունս: Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն փախագոյ³

² Ռոստամ եւ Սոհրաբ, ամբողջ վէպ եւ զանազան հատուածներ Ծահնամայից, թարգմանեց ընդգիր պարսկերէնից Սամուէլ Գիւլզադեանց, Եուզի, 1893:

³ Այստեղ մի խոշոր սխալ կայ, որ արդինք է խեղաթիւրուած ընդօրինակութեան եւ հետեւաբար սխալ սուղագրութեան: Երազ տեսնող Պարսից արքայ բաբակն է (պարսկերէն Էկ): Չեռագիրն օրինակողը ընդգրկեց Ք դիրը փ հնչելով արտագրել է փախիկ եւ յետոյ երբ թէ ուղղել է՝ փախագ, այսինքն բարձանք իմաստը տալով նրան: Այս կերպով բաբակ պարսկական յատուկ անունը դարձել է հայերէն հասարակ անուն փախագ: Գաղղիացի թարգմանիչն էլ՝ այդ սուղագրական սխալին հետեւելով՝ «յաղագս երազոյն փախագոյ» հաստատեց թարգմանել է բառացի՝ «au sujet du songe plein de desirs»: Այս խեղաթիւրումը շահեկան օրինակ է այն բարձրագույն սխալ ար-

եւ արդարադատութեան հրոյն մանուածոյ եւայլն եւայլն» (էջ 316):

Ո՛վ է այս Խորենացու-Եղիազարն եւ նրա գերեկից Բարսումա-Ռաստոսունը, որոնց վրայ է հիմնուում Խորենացին. մինչեւ հիմայ, ինչպէս կարծում եմ, չէ պարզուած: Գիտնական Գրիգոր Խալաթեանց՝ Հայ Արշակունեաց վրայ ուսուեթէն լեզուով իր գրած հետազոտութեան մէջ (Армянские Аршакиды եւն) այս պատմիչներին մտացածին է համարում եւ ենթադրում է թէ Խորենացին կամեցել է ծածկել այն պարսկական աղբիւրն, որից նա իրօք օգտուել է. եւ նա աւելացնում է թէ պէտք չէ կասկածել որ Խորենացին իր ձեռքի տակ ունեցել է որ եւ է պարսկական աղբիւր: Իմ կարծիքով, այդ աղբիւրն էր Դանիշվէրի յօրինած «Խորայնամէն» (Սիւստայ-նամակ՝ պահլաւերէն) որը Սահակ Բագրատունին տուել է նրան, պատուիրելով, որ այդպիսի մի պատմութիւն էլ նա գրէ Հայոց համար:

Յամենայն դէպս, Խորենացու Պատմութեան մէջ իրանի վրայ եւ Գ.—Դ. դարերի հայ-պարսկական յարաբերութիւնների մասին, ուրիշ պատմիչներից տարբեր, եւ յաճախ խառնաշփոթ ու իրականութիւնից հեռու տեղեկութիւններ ենք կարգում, որ դժուար թէ նրա պատմիչը, որ իր խօսքով «Շապուհ թագաւորի դպիրն» է եղել իր ժամանակի մասին այդպիսի անճշտութիւններ հաղորդէր:

Կայ եւ մի կարեւոր հանգամանք, մեծապէս ուշադրութեան արժանի: Ինչպէս յայտնի է Սասանեանները շատ անգամ եւ երկարատեւ հալածանք են մղել Հայոց դէմ, ոչ միայն քրիստոնէական այլ եւ քաղաքական շարժառիթներից զբոլուած եւ այն հանգամանքը բնականաբար ազդած է մեր եկեղեցական մատենագիրների մտայնութեան վրայ եւ նրանց վերաբերմունքը դէպի հարեւան երկիրը թշնամական բնաւորութիւն է ստացել: Դժուար է այս կէտում նրանց մեղադրել: Խորենացին էլ այդ մտայնութիւնից առաջնորդուած երես է դարձնում, կամ դոնէ այդպէս է ցոյց տալիս, իրանական աղբիւրներից եւ նախապատուութիւն է տալիս, քրիստոնէայ, յունական պատմագիրներին: «Մեք զՅունացն միայն յիշեցաք զպատմագիրս եւ անդուստ զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել» գրում է նա:

Ֆիրդուսի եւ Խորենացու մէջ մի ուրիշ

սուղագրութիւնների, հետեւաբար եւ սուղագրութիւնների, որոնք մուծուել են մեր հին գրչագիր բնագիրների մէջ:

հետաքրքրական, թէև զուտ պատահական, նմանություն կայ:

Սորենացին դադարեցնում է իր պատմությունը Ն. դարի կէսին, այն ժամանակ երբ Արշակունեաց ազգային հարստության վերջ գտնելովը (429ին) Հայաստան կորցրել էր իր քաղաքական անկախությունը. երկրի մեծագույն մասը Պարսից գերիշխանության տակ էր լինելը, որոնք մարդպաններ էին դնում Հայաստանի նախկին արքայական դահլի վրայ, թէև երկիրն իսկապէս հայ նախարարների մէջ էր բաժնուած: Երկիրը կառավարողներն իսկապէս, Բագրատունիներն, Սիւնիներն, Մամիկոնեաններն, Արծրունիներն, Սորխոսունիներն եւ այլն էին: Գրի դիւտից եւ Ա. թարգմանիչների շրջանից յետոյ Հայաստանում ոչ մի միջնադարական երեւոյթ չկար, ոչ կրօնապէս, եւ ոչ զուտ ազգային կամ քաղաքական տեսակէտով: Եւ Սորենացին, որ պարծենում էր թէ Հայը «հանուրց հիւսիսականաց վեհագոյնն» է, գրելը չի կարողանում յառաջ տանել իր երկրի ներքին պառակտումներն եւ արտաքին տեսարանները նկարագրելու համար եւ սկսում է «ողբալ»: «Ողբամ դքեզ Հայոց Աշխարհ» Գլուխով է վերջացնում իր ձեռնարկը:

Նոյնպէս է վարուել նաեւ Փիրզուսին: Նա եւս իր պատմությունն ու քնարերգությունը դադարեցրել է երբ Պարսկաստան կորցնում է իր քաղաքական անկախությունը (Ն. դարի կէսին), երբ հայրենիքն ինկած է օտար յեղի, եւ օտար իշխանների տիրապետության տակ, երբ հայրենի կրօնը բռնի կերպով հալածուած եւ մեկուսացուած է եւ երբ նոյն իսկ գիրն ու գրականությունը տեղի են տուած կրօնական ազդեցութեան եւ արարականի փոխուած: Նա այլ եւս իր «գիհկաններին» չի լսում. գովաբանելու, պանծացնելու որ եւ է երեւոյթ չկար:

Սորենացու նման նա էլ չի կարողանում իր գրելը յառաջ տանել եւ իր հսկայական ձեռնարկությունը նոյնպէս ողբով է վերջացնում: Նրա այս ողբն անձնակալն է: Փիրզուսին դառնապէս դանդաղուած է թէ 35 տարի անընդհատ աշխատելուց յետոյ նա արտաքին վիճակի մէջ է գտնուում: Ուրիշներն օգտուած են նրա աշխատանքից ձրիօրէն. իսկ ինքը նեղութեան մէջ է: Ահա նրա վերջին խօսքերը.

«Վաթսուն եւ հինգ տարի անցան իմ գլխից. հոգիս տխուր է եւ անձկալից: Որ-

չափ աւելի եռանդով որոնում էի մեր թագաւորների պատմությունն, այնչափ իմ ասողութունացնում էր իր ընթացքը: Ծառեր, որոնք մեծ են իրենց գիտութեամբն եւ ծննդովը, որոնք իրենց համբաւն իմ գրքիս եւ պարտական, գալիս, արտագրում են իմ գրածները ձրիարար, կարծես ես նրանց վարձկան պաշտօնեան լինիմ»:

(Շարունակելի:) ՍԱՐՈՒՒՍՆ



ԱՐԵՏԻՍ ԿԵՐՈՂԻԿՈՍ ԷՋՄԻՇԹՆԵՑԻ 1594—1623

1. Առաքել Դաւրիթեցի թէև զիտէ թէ Մեղիսեղեկ կաթողիկոսի օրով էջմիածնի աթոռին վրայ երեք եւ չորս կաթողիկոսներ դոյութիւն ունէին, այս ինքն Դաւրիթ, Մեղիսեղեկ, Աւետիս եւ Սրապիտն, բայց՝ դրամամբ կամ ոչ, յայտնի չէ, եւ ոչ անդամ մը յանուանէ կը յիշատակէ զԱւետիս:

Ա. Ա. Ալպոյսաճեան¹ յեցած Գրիգոր Դարանազցույ ժամանակագրութեան եւ Հ. Գ. Գալսեմբարեան² նոյն ժամանակագրի եւ ուրիշ ժամանակակից յիշատակարաններու վրայ առաջուցուցին թէ Դաւրիթ կաթողիկոս, որ չէր վստահեր իւր տկար ոյժերուն վրայ չիտի ժամանակի մը մէջ կառավարել անձամբ Հայոց Եկեղեցին, ընտրած էր իրեն աթոռակից բայց Մեղիսեղեկէն նաեւ Աւետիսը: Որչափ ալ պարզուած կարելի է նկատել հարցի իւր էական գծերը մէջ, բայց տակաւին Աւետիս կաթողիկոսի ինքնութիւնը եւ անոր գործունէութեան սահմանը ճշգրտած կարելի չէ համարել ընդարձակ առմամբ: Ինձ թոյլ պիտի տամ միւսանդամ անդրադառնալ Աւետիս կաթողիկոսի անձնաւորութեան եւ այս առթիւ մի համարել ինձ մտաչելի պատմական նիւթերը, ծանօթ եւ անծանօթ, յուսալով թէ անոնք պիտի նպաստեն ժի. դարու առաջին քաւորի Հայ Եկեղեցու անցքերը աւելի լուսով լուսաւորելու:

2. Աւետիս կաթողիկոս պատմական բե-

¹ Բիւզանդիոն, 1907, Թ. 3285 եւ 3424: ² Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տան կաթողիկոսներու: Վիեննա 1915, էջ 44—49: Հմմտ. եւ Ազաւնուհի, Միաբանք, էջ 41:

մին վրայ առաջին անգամ երեւան կու գայ 1601ին ինքնազիր յիշատակարանով մը: Այս թուին անիկա Կ. Պոլիս կը գտնուէր. հոս Ս. Սարգիս Եկեղեցույ հովանւոյն տակ կ'օրինակէ Ներսէս Շնորհաւոյ Ընդհանրականը: Կը ներկայացնէմ այս տեղ Չեռագրիս յիշատակարանը³, յսպումամբ անկարեւոր տողերու.

«Կատարուին է Ընթանուրակիս (Ընդհանրականիս):

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՌԾ. ի քաղաքն Կոստանդնուպոլիս, ընդ հովանեաւ սուրբ Սարգրէին. ի քահանաութիւն սուրբ Սարգիսի տէր Նիկողոսոսին, տէր Ալէքսանին, տէր Սարգիսին որ է նորընծայ. բազում աշխատանք ունին վերա գրոցս: Արդ... յիշեցէք... Աւետիս կաթողիկոս էջմիածնեցի, որ անուամբս եմ եւ ոչ գործովս. որ բազում վախաբանաւք եւ աշխատութեամբ գրեցի գիրքս, խամայրի եւ նաւոր: Ով որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի ինքն ի Քրիստոսէ. ամէն: (Բոլորգիր) Արդ գրեցաւ սոց ի հալալ արդեանց իմոց եւ ի արդարեան վաստակոց յիշատակ ինձ Աւետիս կաթողիկոսին եւ ծնաւոցս իմոց հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին եւ եղբաւրս Կիրակոսին. Սհակին որ մանուկ հասակաւ առ Քրիստոս փոխեցաւ եւ քեւերցս Եղիսարեթին, Շաղվարդին եւ եղբաւրորդին իմ նորարողը թարխանին»:

3. Թէ ինչ հանգամանքով կամ նպատակաւ եկած էր Աւետիս կաթողիկոս Կ. Պոլիս, յայտնի չէ ժամանակակից յիշատակարաններէն: Ժամանակի հանգամանքները երկու են. թաղութիւն թոյլ կու տան. կամ էջմիածին, Մեղիսեղեկի վերադարձն ետքը, աւելորդ նկատուած է երկրորդ աթոռակցի մը դոյութիւնը, եւ այս պատճառաւ խորհուրդ տրուած է Աւետիսին՝ երթալ Կ. Պոլիս եւ պատրիարքական աթոռին տէր ըլլալ, եւ կամ, որ աւելի հաւանական կ'երեւայ, հարկ տեսնուած է էջմիածնի պարտքերը վճարելու համար նոր հանգանակութիւն մ'ընել եւ այս նպատակաւ Աւետիս Կ. Պոլիս ուղարկուած: Դրութիւնը ճշգրիտ ըմբռնելու համար յառաջ կը բերեմ հոս Մեղիսեղեկի Կ. Պոլիս ուղեւորութեան եւ վերադարձի պարագաները, օգտուելով միակ աղբեր՝ Չամչեանի տողերէն.

Մեղիսեղեկ կաթողիկոս նեղուած պարտատէրներէն «եւ յԱրարատեան աշխարհէ եւ

զնաց ի Կ. Պոլիս. դուցէ մարթացի ժողովել անտի դրամս: Ընկալաւ զնա սիրով ժողովուրդ քաղաքին եւ մեծամեծք Հայոց, եւ պաշտեցին զամիսս քանի մի. եւ ջանային հրաժարեցանել զնա ի կաթողիկոսութենէ, զի բարձրէ երկոյութիւն կաթողիկոսաց. ամին իրի յորժամ հանին զՏիրատուր պատրիարգ յաթոսոյ, եղին ի տեղի նորա զսա ինքն զՄեղիսէթ: Այլ մինչէ եւ էր նորա կացեալ յայնմ իշխանութեան ամ մի, ընկեցին զնա ի պատրիարգութենէ, եւ եղին ի տեղի նորա զՅովհաննէս երրորդ. որում յաջորդեաց Գրիգոր Կեսարացի: Իսկ Մեղիսէթ ելեալ զնաց անդրէն յէջմիածին, եւ մասնեցաւ ի ձեռս պարտատեարց. եւ սպա վախուցեալ ի ձեռաց նոցա՝ զնաց եւ եղիւ գրաւիթ կաթողիկոս. եւ եկաց ընդ նմա ի թաքստի. եւ երկուքին եւս ըմբռնեալ ի տարակուսի՝ հեծէին անգաղար ի ձեռաց պարտատեարց» (Չամչեան, Գ., 535): Չամչեանի անձանօթ է Աւետիսի անձնաւորութիւնը, այս պատճառաւ ալ անոր յիշատակութիւնը չէ բրած:

Մեղիսեղեկի ուղեւորութիւնն ի Կ. Պոլիս եւ պատրիարքական աթոռը նստելը Չամչեան կը զնէ 1599 եւ 1600 տարիներու մէջ: Յայտնի է ժամանակակից յիշատակարանէ մը, թէ 1600ին Կ. Պոլիս էր Մեղիսեղեկ. Ղազար Եպիսկոպոս կ'օրինակէ Սաղմոսարան մը «թվին ՌԽԹ. ի մայրաքաղաք Ըստամբուլ, ի թաղաւորութեան սուլթան Մուրատի՝ որդւոյն սուլթան Մահմատի. ի պատրիարգութեան տէր Մեղիսէթ կաթողիկոսի, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ (գօրավարի) որ Սուլումանաստիւր ասի» (Սարգիսեան, Յուլյակ, Միսիթ. Մատենադարանի ի Վենետիկ, Ա., 312):

Ուստի Աւետիս Կ. Պոլիս մեկնած է Մեղիսեղեկի Երեւան հասնելէն անմիջապէս ետքը: Թէ որչափ ժամանակ դեղերեցաւ անիկա Կ. Պոլիս կամ ինչ յաջողութեամբ ետ դարձաւ, չգիտենք:

3. Աւետիս 1603ին էջմիածին կը գտնուէր, այս տարւոյն պատահած է իրեն Երեւան Գրիգոր Դարանազցի, որ այսպէս կ'արձանագրէ իւր ժամանակագրութեան մէջ. «Էին երեք կաթողիկոս ի վերայ մին աթոռոյն. որ էր յոյժ անկարգութիւն. անուն առաջնոյն Դաւիթ եւ երկրորդին՝ Մեղիսեղ եւ երրորդին՝ Աւետիս: Սա (Աւետիս) պարկեշտազոյն էր եւ բան վարդապետութեան ունէր ի վերայ նոցա (այսինքն՝ Դաւիթի եւ Մեղիսեղի). բայց

³ Չեռ. էջմ., 503, թղ. 171 ա: